

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՎԱ-ԱԱՏՄ-ԲՄԱՇՁԲ-22/14-1**

ք. Երևան

«15» 07 2022թ.

Վարչապետի աշխատակազմն ի դեմս Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ. Բոշյանի, որը գործում է շխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Նորոտքս Էնջինիրինգ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Դ. Անտոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 12 ամիս:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի

հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 229 850 000 (երկու հարյուր քսանինը միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որից 38 308 333.33 (երեսունութ միլիոն երեք հարյուր ութ հազար երեք հարյուր երեսուներեք դրամ և երեսուներեք լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով յուրաքանչյուր ֆինանսական տարում ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրերի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության իրապարակ,
Կառավարական Լուս. 1

ՀՀ ՖՆ գործառնախնայ վարչություն

Հ/Հ
ՀՀՀՀ 0250555



(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Նորտեքս Էնջինիրինգ» ՓԲԸ
ք.Երևան, Վարդանանց փակ. 6, գրասենյակ 403

Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570060401230100

Հ/ՀՀՀ 02648755



(ստորագրություն)

Կ.Տ.Շ.ՇԱԺԿԱՆԻՐԻՆԳ
"NORTEX ENGINEERING"
02648755

Հավելված թիվ 1
2022թ. կնքված
« 15 » 07
ՎԱ-ԱԱՏՄ-ԲՄԱՇՁԲ-22/14-1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի շենքի
էներգաարդյունավետության բարձրացման և վերանորոգման աշխատանքների

Յ/Յ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	միավորի գին	Ընդամենը
1	2	3	4	5	6
1-1. Ճարտարապետական մաս					
<i>Քանդման աշխատանքներ՝ I մասնաշենք I և II հարկեր</i>					
1	Խճանկարե հատակի քանդում	մ ²	9	571.21	5,140.89
2	Բետոնե սալիկներով հատակների քանդում	մ ²	145.1	571.21	82,882.57
3	Մանրահատակի և լամինատե հատակների քանդում	մ ²	602	571.21	343,868.42
4	Լինոլեումի քանդում	մ ²	37.45	143.02	5,356.10
5	Տարբեր տիպի շրիշակների քանդում	մ	471.7	18.73	8,834.94
6	Բետոնե շերտի քանդում 5սմ հաստության 152մ ²	մ ³	7.6	14,285.35	108,568.66
7	Առաստաղի ներկի մաքրում	մ ²	758.4	238.36	180,772.22
8	Հիմնական պատերում բացվածքի քանդում	մ ³	1.1	14,285.35	15,713.89
9	Խարամաբետոնե բլոկներից միջնորմային պատերի քանդում	մ ³	88.7	8,571.55	760,296.49
10	Պատերի փայտատաշեղային սալերի քանդում	մ ²	206	571.21	117,669.26
11	Պատերի քանդում ներկի մաքրում	մ ²	434.5	190.69	82,854.81
12	Պատերի գաջի սվաղի ծրատում	մ ²	434.5	380.52	165,335.94
13	Շեպերի քանդում գաջի սվաղից	մ ²	105.4	667.40	70,343.96
<i>Քանդման աշխատանքներ՝ I մասնաշենք I և II հարկեր</i>					
1	Խեցեսալիկների ապամոնտաժում	մ ²	20.5	380.52	7,800.66
2	Խճանկարե հատակի քանդում	մ ²	10.9	571.21	6,226.19
3	Բետոնե սալիկներով հատակների քանդում	մ ²	41.6	571.21	23,762.34
4	Մանրահատակի և լամինատե հատակների քանդում	մ ²	625	571.21	357,006.25
5	Տարբեր տիպի շրիշակների քանդում	մ	409.1	18.73	7,662.44

6	Բետոնե շերտի քանդում 5սմ հաստության 155մ ²	մ ³	7.75	14,285.35	110,711.46
7	Ատաստաղի ներկի մաքրում	մ ²	796	238.36	189,734.56
8	Հիմնական պատերում բացվածքի քանդում	մ ³	7.2	14,285.35	102,854.52
9	Խարամաբետոնե բլոկներից միջնորմային պատերի քանդում	մ ³	108.5	8,571.55	930,013.18
10	Հախճասալի քանդում	մ ²	11.2	571.21	6,397.55
11	Պատերի փայտատաշեղային սալերի քանդում	մ ²	76.5	571.21	43,697.57
12	Պատերի մաքրում հին սերկից	մ ²	820.3	190.69	156,423.01
13	Պատերի գաջի սվաղի ծրատում	մ ²	820.3	380.52	312,140.56
14	Շեպերի քանդում գաջի սվաղից	մ ²	131.5	667.40	87,763.10
Ապամոնտաժման աշխատանքները ` ընդհանուր շենքի համար					
1	Առկա լաբորատորիաների թիթեղա օդափութային խողովակների ապամոնտաժում	մ	15	190.69	2,860.35
2	Փայտե վիտրաժի ապամոնտաժում պատուհանագոգերի քանդումով	մ ²	13.72	1,904.32	26,127.27
3	Մետ/պլաստե և փայտե դռների ապամոնտաժում,	մ ²	61.64	1,523.79	93,926.42
4	Մետ/պլաստե և փայտե պատուհանների ապամոնտաժում պատուհանագոգերի քանդումով	մ ²	274	1,904.32	521,783.68
5	Կենտրոնական մուտքի հարթակի քանդում	մ ²	9.24	667.40	6,166.78
6	Մասնաշենքերի ներքին 2 աստիճանավանդակների աստիճանների մետաղական բազրիքի ապամոնտաժում h=900մմ	մ	23.2	475.87	11,040.18
7	Պատերի պանելների կտրում.մուտքերի բացում արտաքին պատերում չորս տեղ	մ ³	0.7	19,047.42	13,333.19
8	Պատերի փակած բացվածքների բացում	մ ³	7.6	9,523.28	72,376.93
9	ճակատների և գետնախարիսխի թափված քարերի տեղերի մաքրում	մ ²	1	190.69	190.69
10	Շին.աղբի բարձում	մ ³	350.3	1,904.32	667,083.30
11	Բարձած շին.աղբի հեռացում մինչև 12կմ հեռ.վրա	տ	630.5	2,856.90	1,801,275.45
Տանիքի ապամոնտաժման աշխատանքներ I և II մասնաշենքեր					
1	Տանիքի տրամատավոր ցինկապատ թիթեղի ապամոնտաժում	մ ²	816	238.36	194,501.76
2	Ջրթափ վերինի ցինկապատ թիթեղի ապամոնտաժում b=800մմ	մ ²	148	190.69	28,222.12
3	Քիվաթիթեղի ցվիզի ցինկապատ թիթեղի ապամոնտաժում b=800մմ	մ ²	150	190.69	28,603.50
4	Պիպաթիթեղի ցինկապատ թիթեղի ապամոնտաժում b=600մմ	մ ²	65	190.69	12,394.85
5	Ջրհորդանի ապամոնտաժում ձևավոր մասերի հետ միասին (14 հատ ձագար, 14 հատ ծունկ)	մ	84	114.07	9,581.88

6	Քիվավահանի ապամոնոտաժում, պահպանել հետագա օգտագործման համար	մ ³	5.6	17,142.25	95,996.60
7	Շին.աղբի բարձում	մ ³	130	1,904.32	247,561.60
8	Բարձած շին.աղբի հեռացում մինչև 12կմ հեռ.վրա	տ	234	2,856.90	668,514.60
Տանիք I և II մասնաշենքեր					
1	Տանիքի տրամատավոր թիթել h=0.55մ	մ ²	816	6,666.38	5,439,766.08
2	Ջրթափ վերին b=800մմ, հարթ թիթել h=0.50մ	մ ²	148	5,713.80	845,642.40
3	Քիվաթիթել b=800մմ, հարթ թիթել h=0.5մ	մ ²	150	5,713.80	857,070.00
4	Պիպաթիթել b=600մմ, հարթ թիթել h=0.50մ	մ ²	65	5,713.80	371,397.00
5	Հարթ թիթելից գոգնոցի տեղադրում պարապետի վրա, b=900մմ h=0.5մ	մ ²	14.2	5,713.80	81,135.96
6	Հարթ թիթելից ձագար 120x100մմ h=0.5մ	հատ	14	4,285.35	59,994.90
7	Հարթ թիթելից ծունկ 120x100մմ h=0.5մ	հատ	14	1,428.45	19,998.30
8	Հարթ թիթելից ջրհոս խողովակ 120x100մմ h=0.5մ	մ	91	3,809.48	346,662.68
9	Ապամոնտաժված փայտե կոնստրուկցիաների օգտագործում	մ ³	5	28,570.70	142,853.50
10	Տանիքի փայտե կոնստրուկցիաների կառուցում հյուսիսային սոճու փայտանյութով, ոչ ավել 20% խոնավությամբ	մ ³	3	247,612.16	742,836.48
11	Տանիքի մետաղական ճաղաշարերի տեղադրում h=70սմ - 808,7կգ	գմ	172	4,476.04	769,878.88
12	Մետաղական ճաղաշարի յուղաներկում 2 շերտով	մ ²	12.5	1,143.27	14,290.88
13	Գոլորշամեկուսիչ շերտ պոլիպրոպիլենից, խզման գործակիցը ոչ պակաս 1068/890 Ն/սմ գոլորշաթափանցման դիմադրությունը քմժ ոչ պակաս Պա/մգ ջրակայունությունը ոչ պակաս 1000մմ ջս (համարժեք)	մ ²	830	1,713.63	1,422,312.90
14	Տանիքի ջերմամեկուսացում պեռլիտով լցված պարկերով 200մմ հաստության	մ ²	825	5,713.80	4,713,885.00
15	Պատի կառուցում 100մմ հաստության խարամաբետոնե սալերով 3,3մ3	մ ²	33	3,428.96	113,155.68
16	Օդափոխության բլոկների սվաղում լավորակ ցեմենտավազային շաղախով	մ ²	33	1,713.63	56,549.79
17	Օդափոխության բլոկների կմաղքը իրականացնել մետ. խողովակներից 15x15x1.5մ	գմ	95	1,428.45	135,702.75
18	Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ	մ ²	5.7	1,143.27	6,516.64
19	Հարթ թիթելից օդափոխության բլոկների կառուցում h=0,50մ	մ ²	10	5,713.80	57,138.00
20	Հարթ թիթելից զոնդի տեղադրում օդափոխության բլոկների վրա b=500մմ h=0,5մ	մ ²	4.5	7,142.25	32,140.13
21	Գլխավոր մուտքի ծածկի ֆերմայի և կավարանաչի իրականացում մետ. խողովակներից 50x30x2մ	գմ	31.2	2,095.85	65,390.52

22	Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ	մ ²	10	1,143.27	11,432.70
23	Տանիքի տրամատավոր թիթեղ h=0.550մմ	մ ²	4.1	6,666.38	27,332.16
24	հարթ թիթեղից գոգնոցի տեղադրում պարապետի վրա, b=400մմ h=0.5մմ	մ ²	2.75	5,713.80	15,712.95
25	ճոռերի երեսապատում ցինկապատ հարթ թիթեղով h=0.5մմ b=700մմ	գ.մ	2.4	5,713.80	13,713.12
26	Հարթ թիթեղից ձագար 80x100մմ h=0.5մմ	հատ	2	3,809.48	7,618.96
27	Գործարանային հարթ թիթեղից ծունկ 80x100մմ h=0.5մմ	հատ	4	1,428.45	5,713.80
28	Հարթ թիթեղից ջրիոս խողովակ 80x100մմ h=0.5մմ	մ	7	3,333.62	23,335.34
Շինարարական աշխատանքներ՝ I մասնաշենք					
1	Բետոնե նախաշերտի իրականացում B15 դասի 5սմ հաստության 152,0մ ²	մ ³	7.6	39,046.57	296,753.93
2	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում բիտումի մաստիկա 2 շերտ	մ ²	48.2	1,237.76	59,660.03
3	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստության, M150 մակնիշի շաղախով	մ ²	800	1,904.32	1,523,456.00
4	Հատակների կառուցում խեցեսալիկներով՝ d=10մմ ամրացված սոսնձով	մ ²	60.1	9,047.42	543,749.94
5	Կեռամոզրամիտե լավորակ սալերով հատակի իրականացում ամրացված սոսնձով՝ չսահող d=10մմ	մ ²	233.5	12,380.18	2,890,772.03
6	Լամինատե հատակների իրականացում d=12մմ (պարալոնի շերտի և շրիշակի տեղադրումով)	մ ²	490.5	7,142.25	3,503,273.63
7	Խեցեսալե շրիշակների կառուցում ամրացված սոսնձով h=10սմ L=11,5մ	մ ²	1.15	11,428.45	13,142.72
8	Կեռամոզրամիտե շրիշակների կառուցում ամրացված սոսնձով h=10սմ L=202,1մ	մ ²	20.2	14,285.35	288,564.07
9	Պլաստիկ շրիշակների h=7սմ արժեքը	մ	463.5	952.58	441,520.83
10	Միջնորմի իրականացում խարամաբետոնե բլոկներով 100 մմ հաստությամբ 69,3մ ³	մ ²	693	3,428.96	2,376,269.28
11	Միջնորմի իրականացում խարամաբետոնե բլոկով 200 մմ հաստությամբ	մ ³	51.5	25,237.08	1,299,709.62
12	Պլաստիկ կախովի առաստաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ ²	43.5	3,809.48	165,712.38
13	Պլաստիկե անկյունակ	մ	76	380.52	28,919.52
14	Փայտե չորսու 30*50	մ ²	1.6	11,428.45	18,285.52
15	Առաստաղների սվաղում լավորակ գաջի շաղախով	մ ²	800	2,571.72	2,057,376.00

16	Առաստաղի լավորակ ծեփամածիկի հարթեցնող շերտի իրականացում և ներկում լատեքսային ներկածածկով	մ ²	752	1,808.97	1,360,345.44
17	Պատերի ցեմ/ավազային լավորակ սվաղ	մ ²	264.1	1,904.32	502,930.91
18	Պատերի երեսապատում հախճասալերով , սոսնձի վրա	մ ²	264.1	9,047.42	2,389,423.62
19	Պատերի և միջնորմների սվաղում լավորակ գաջի շաղախով	մ ²	1867.8	2,285.69	4,269,211.78
20	Պատերի և միջնորմների սվաղի ծեփամածկում և ներկում լավորակ լատեքսային ներկով	մ ²	1801.6	1,713.63	3,087,275.81
21	Պատերի և միջնորմների սվաղի ծեփամածկում և ներկում լավորակ ակրելային ներկով	մ ²	101.2	1,904.32	192,717.18
22	Շեփերի սվաղումը գաջի լավորակ շաղախով	մ ²	299.2	3,809.48	1,139,796.42
23	Շեփերի լավորակ ծեփամածիկի հարթեցնող շերտի իրականացում և ներկում լատեքսային ներկածածկով	մ ²	282.7	1,762.15	498,159.81
24	Շեփերի լավորակ ծեփամածիկի հարթեցնող շերտի իրականացում և ներկում ակրելային ներկով	մ ²	16.5	1,904.32	31,421.28
Շինարարական աշխատանքներ` II մասնաշենք					
1	Բետոնե նախաշերտի իրականացում B15 դասի 5սմ հաստության 155,0մ ²	մ ³	7.75	39,046.57	302,610.92
2	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում բիտումի մաստիկա 2 շերտ	մ ²	43.4	1,237.76	53,718.78
3	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստության, M150 մակնիշի շաղախով	մ ²	751.8	1,904.32	1,431,667.78
4	Հատակների կառուցում խեցեսալիկներով` d=10մմ ամրացված սոսնձով	մ ²	118	9,047.42	1,067,595.56
5	Կեռանոգրամիտե լավորակ սալերով հատակի իրականացում ամրացված սոսնձով`չսահող d=10մմ	մ ²	229.1	12,380.18	2,836,299.24
6	Լամինատե հատակների իրականացում d=12մմ (պարալոնի շերտի և շրիշակի տեղադրումով)	մ ²	494.3	7,142.25	3,530,414.18
7	Խեցեսալե շրիշակների կառուցում ամրացված սոսնձով h=10սմ L=11,5մ	մ ²	1.15	11,428.45	13,142.72
8	Կեռանոգրամիտե շրիշակների կառուցում ամրացված սոսնձով h=10սմ L=196,5մ	մ ²	19.65	14,285.35	280,707.13
9	Պլաստիկ շրիշակների h=7սմ արժեքը	մ	418.9	952.58	399,035.76
10	Միջնորմի իրականացում խարամաբետոնե բլոկներով 100 մմ հաստությամբ 58,7մ ³	մ ²	587	3,428.96	2,012,799.52
11	Միջնորմի իրականացում խարամաբետոնե բլոկով 200 մմ հաստությամբ	մ ³	38	25,237.08	959,009.04
12	Պլաստիկ կախովի առաստաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ ²	43.5	3,809.48	165,712.38
13	Պլաստիկե անկյունակ	մ	76	380.52	28,919.52

14	Փայտե չորսու 30*50	մ ²	1.6	11,428.45	18,285.52
15	Առաստաղների սվաղում լավորակ գաջի շաղախով	մ ²	751.8	2,571.72	1,933,419.10
16	Առաստաղի լավորակ ծեփամածիկի հարթեցնող շերտի իրականացում և ներկում լատեքսային ներկածածկով	մ ²	683.4	1,808.97	1,236,250.10
17	Պատերի ցեմ/ավազային լավորակ սվաղ	մ ²	229	1,904.32	436,089.28
18	Պատերի երեսապատում հախճասալիկներով , սոսնձի վրա	մ ²	229	9,047.42	2,071,859.18
19	Պատերի և միջնորմների սվաղում լավորակ գաջի շաղախով	մ ²	1783.2	2,285.69	4,075,842.41
20	Պատերի և միջնորմների սվաղի ծեփամածկում և ներկում լավորակ լատեքսային ներկով	մ ²	1671.7	1,713.63	2,864,675.27
21	Պատերի և միջնորմների սվաղի ծեփամածկում և ներկում լավորակ ակրեյային ներկով	մ ²	147.1	1,904.32	280,125.47
22	Շեփերի սվաղումը գաջի լավորակ շաղախով	մ ²	194.4	3,809.48	740,562.91
23	Շեփերի լավորակ ծեփամածիկի հարթեցնող շերտի իրականացում և ներկում լատեքսային ներկով	մ ²	173.7	1,762.15	306,085.46
24	Շեփերի լավորակ ծեփամածիկի հարթեցնող շերտի իրականացում և ներկում ակրեյային ներկով	մ ²	20.7	1,904.32	39,419.42
Շինարարական աշխատանքներ I և II մասն. համար					
1	Բացվածքի շարում խարամաբետոնե բլոկով 250 մմ հաստությամբ	մ ³	10	25,713.80	257,138.00
2	Պատերի պանելների քայքայված հատվածների սվաղում ցեմ.ավազային շաղախով	մ ²	1	1,904.32	1,904.32
3	Արտաքին պատուհանագոգերի իրականացում բազալտե սալիկներով՝ h=13մմ	մ ²	20	14,285.35	285,707.00
4	Աստիճանների երեսապատում կեռամոզրամիտե լավորակ սալերով ամրացված սոսնձով՝ չսահող d=10մմ	մ ²	30	14,285.35	428,560.50
5	Այլումինե բազրիքների տեղադրում ներքին աստիճաններից	մ	20.5	23,808.63	488,076.92
6	Աստիճանների անկյունային հատվածում այլումինե անկյունակների տեղադրում	մ	66	2,856.90	188,555.40
7	Կեռամոզրամիտե շրիշակների կառուցում ամրացված սոսնձով h=10սմ L=38,2մ	մ ²	3.82	14,285.35	54,570.04
8	Մուտքի աստիճանների, հարթակների, թեքահարթակների երեսապատում բազալտե սալիկներով d=30մմ	մ ²	15.5	14,285.35	221,422.93
9	Մուտքի շրջանակի գետնախարիսխը երեսապատում բազալտե սալիկներով d=30մմ	մ ²	1.5	18,094.83	27,142.25
10	Գլխավոր մուտքի շրջանակը, որոշ պատուհանների, դռների շրջանակները, մասնաշենքերի քիվերը սվաղել շերմամեկուսացման համար նախատեսված սոսինձե կապակցա-նյութով d=>3մմ	մ ²	110	2,381.03	261,913.30

11	Այնուհետև ամբողջությամբ ծեփամածկել և ներկել ճակատային ներկով՝ սև երանգի	մ ²	110	1,713.63	188,499.30
12	Ապակե ցանցի (5x5մմ,քաշը 1մ2 - 160գ) տեղադրում սուսինձե կապակցանյութով սվաղի մեջ	մ ²	110	2,856.90	314,259.00
13	Գլխավոր մուտքի շրջանակի վրա տեղադրել բազալտե սալիկներից գլխադիր 50մմ հաստության b=35սմ	մ ²	1.3	19,047.42	24,761.65
14	Երկրորդական մուտքի աստիճանները և հարթակը երեսապատում բազալտե սալիկներով d=30մմ	մ ²	19	14,285.35	271,421.65
15	Արտաքին պատերի բացվածքներում դռների և պատուհանների տեղադրումից հետո ճեղքերը խժուժել L=754,0մ	մ ³	1.3	9,523.28	12,380.26
16	Այլումինե բազրիքների տեղադրում արտաքին աստիճաններին, հարթակին և թեքահարթակին	մ	23.5	23,808.63	559,502.81
17	Յուրաքանչյուր պատուհանի վրա նախատեսել մեկ բարդ փական	հատ	91	9,523.28	866,618.48
18	Պատուհանի բարդ փականի հատվածում տեղադրել միջատապաշտպան ցանց	մ ²	76.5	7,618.97	582,851.21
19	Առաջին հարկի սանհանգույցում հաշմանդամների համար տեղադրել միկելապատ բռնածողեր Փ38մմ	մ	10	7,618.97	76,189.70
20	Բացվածքների անկյուններում տեղադրել լրացուցիչ ապակե ցանցի թևիկներով անկյունակ 150x150մմ	մ	762	380.52	289,956.24
21	Բացվածքների 4 անկյուններում 45 աստիճան անկյան տակ տեղադրել լրացուցիչ ապակե ցանց 200x400մմ	մ ²	9	1,428.45	12,856.05
Արտաքին վիտրաժներ					
1	Արտաքին այլումինե վիտրաժ, ապակեփաթեթը՝ երկշերտ, -փաթեթի կտրվածքը 4x12x4մմ -պրոֆիլը՝ ջերմակամրջակով,լայնքը ոչ պակաս 60մմ -գույնը սպիտակ,անողացված -խուլ մասերը ջերմամեկուսիչ նյութով -կոնստրուկցիան՝ բացվող	մ ²	5.28	90,473.31	477,699.08
2	Նույնը -կոնստրուկցիան՝ չբացվող	մ ²	2.28	71,426.75	162,852.99
Ներքին վիտրաժներ					
1	Ներքին այլումինե վիտրաժ, ապակեփաթեթը՝ միաշերտ -փաթեթի կտրվածքը 4x12x4մմ -պրոֆիլը՝ առանց ջերմակամրջակի -պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ -գույնը սպիտակ,անողացված -կոնստրուկցիան՝ բացվող	մ ²	24.04	80,950.03	1,946,038.72
2	Նույնը -կոնստրուկցիան՝ չբացվող	մ ²	42.77	61,902.61	2,647,574.63
Արտաքին դռներ					

1	Արտաքին այլումինե դռներ	մ ²	15.84	90,473.31	1,433,097.23
	ապակեփաթեթը՝ երկշերտ, -փաթեթի կտրվածքը 4x12x4մմ -պրոֆիլը՝ ջերմակամրջակով,լայնքը ոչ պակաս 60մմ -գույնը սպիտակ,անողացված -խուլ մասերը ջերմամեկուսիչ նյութով -կոնստրուկցիան՝ բացվող				
2	Արտաքին այլումինե դռներ	մ ²	4.32	71,426.75	308,563.56
	-ապակեփաթեթը՝ երկշերտ -փաթեթի կտրվածքը 4x12x4մմ -պրոֆիլը՝ ջերմակամրջակով -լայնքը ոչ պակաս 60մմ -գույնը մոխրագույն,անողացված -խուլ մասերը ջերմամեկուսիչ նյութով - կոնստրուկցիան չբացվող				
3	Մետաղական ճաղաշար-դռան տեղադրում ՄՃ-1 1հատ	տ	0.069	904,736.53	62,426.82
4	Մետաղական դռան և ճաղաշարերի պատրաստում և տեղադրում	տ	1.026	904,736.53	928,259.68
5	Ծխնի	հատ	8	3,809.48	30,475.84
6	Փական	հատ	2	14,285.35	28,570.70
7	Մետաղական դռան և ճաղաշարերի յուղաներկում 2 անգամ	մ ²	20	1,143.27	22,865.40
Ներքին դռներ					
1	Ներքին ՄԴՖ դռներ	մ ²	114.4	47,618.12	5,447,512.93
	-խուլ -փեղկի հաստությունը ոչ պակաս 50մմ -երեսապատման շերտը ՄԴՖ ոչ պակաս 8մմ -գույնը սպիտակ				
2	Մետաղապլաստե միջնորմ	մ ²	52.92	28,570.70	1,511,961.44
3	Մետաղապլաստե ներքին դռներ, խուլ, պրոֆիլի խցերի քանակը ոչ պակաս 4, մետաղական միջուկի հաստությունը ոչ պակաս 1,2մմ,պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ,գույնը սպիտակ,կոնստրուկցիան բացվող Դ-3, Դ-3'	մ ²	30.58	38,093.98	1,164,913.91
4	Մետաղապլաստե ներքին դռներ, խուլ, պրոֆիլի խցերի քանակը ոչ պակաս 4, մետաղական միջուկի հաստությունը ոչ պակաս 1,2մմ,պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ,գույնը սպիտակ,կոնստրուկցիան բացվող Դ-4	մ ²	35.28	38,093.98	1,343,955.61
5	Մետաղապլաստե մտոց, խուլ, պրոֆիլի խցերի քանակը ոչ պակաս 4, մետաղական միջուկի հաստությունը ոչ պակաս 1,2մմ,պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ,գույնը սպիտակ,կոնստրուկցիան բացվող Դ-7,8	մ ²	1.12	42,856.05	47,998.78
6	Երեսակալներ ՄԴՖ 10*70	մ	280.5	1,904.32	534,161.76

	Արտաքին և ներքին պատուհաններ, պատուհանագոգեր				
1	Մետաղապլաստե արտաքին պատուհաններ՝ -ապակեփաթեթը երկշերտ -փաթեթի կտրվածքը 4x12x4մմ -պրոֆիլի խցերի քանակը ոչ պակաս 4 - մետաղական միջուկի հաստությունը ոչ պակաս 1,2մմ -պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ -գույնը սպիտակ - կոնստրուկցիան բացվող	մ ²	163.9	32,380.18	5,307,111.50
2	Նույնը՝ չբացվող	մ ²	77	24,761.22	1,906,613.94
3	Պլաստիկ պատուհանագոգերի (b=30սմ) արժեքը	մ	118.3	3,333.62	394,367.25
4	Դռների շեմերի փակում լատունե շերտաթերթով	մ	68.6	3,047.59	209,064.67
Արտաքին հարդարում՝ I մասնաշենք					
1	Նախքան ջերմամեկուսիչ կպցնելը մակերեսը մաքրել	մ ²	553.1	475.87	263,203.70
2	Որմնախարիսխի երեսապատում բազալտե սալիկներով d=30մմ ցեմ.ավազային շաղախի վրա	մ ²	42.1	19,047.42	801,896.38
3	Մետաղական ցանցի տեղադրում Φ4Bp-I 10x100մմ	մ ²	42.1	1,523.79	64,151.56
4	Պատերի ջերմամեկուսացում 80մմ հաստությամբ (η=100-120կգ/մ ³ , λ<= 0.04 Վտ/մ.0/С) հանքաքամբակե սալե-րով	մ ²	74	1,428.45	105,705.30
4՝	Ամրացում աերոզոլային պոլիուրեթանե սոսնձով 74մ ²	բալոն	14.8	8,094.83	119,803.48
5	Փրփրապոլիստիրոլե սալեր 80մմ հաստությամբ (η= 25-35կգ/մ ³ , λ<=0.04 Վտ/մ.0/С) EPS	մ ²	479.1	4,285.35	2,053,111.19
5՝	Ամրացում աերոզոլային պոլիուրեթանե սոսնձով 479,1մ ²	բալոն	95.8	8,094.83	775,484.71
6	Ջերմամեկուսացման համար նախա-տեսված սոսինձե կապակցանյութով սվաղի հրականացում b=>3մմ	մ ²	553.1	1,904.32	1,053,279.39
7	Ապակե ցանցի (5x5մմ,քաշը 1մ ² - 160գ) տեղադրում սոսինձե կապակցանյութով սվաղի մեջ	մ ²	635.2	857.24	544,518.85
8	Պատերը ծեփամածկել լավորակ ճակատային մածիկով և ներկել գերկայուն ճակատային ներկով	մ ²	553.1	1,904.32	1,053,279.39
9	Ափսեանման խցաբութակ 10x160մմ, արժեքը	հատ	3872	42.56	164,792.32
10	Արտաքին փայտամածի կառուցում և քանդում	100մ ²	2.16	95,235.38	205,708.42
Արտաքին հարդարում՝ II մասնաշենք					
1	Նախքան ջերմամեկուսիչ կպցնելը մակերեսը մաքրել	մ ²	574.8	475.87	273,530.08
2	Որմնախարիսխի երեսապատում բազալտե սալիկներով d=30մմ ցեմ.ավազային շաղախի վրա	մ ²	53.6	19,047.42	1,020,941.71
3	Մետաղական ցանցի տեղադրում Φ4Bp-I 100x100մմ	մ ²	53.6	1,523.79	81,675.14

4	Պատերի ջերմամեկուսացում 80մմ հաստությամբ (η=100-120կգ/մ ³ , λ<= 0.04 Վտ/մ.0/С) հանքաքամքակե սալե-րով	մ ²	80.5	1,428.45	114,990.23
4	Ամրացում աերոզոլային պոլիուրեթանե սունձով 80,5մ ²	բալոն	16.1	8,094.83	130,326.76
5	Փրփրապոլիստիրոլե սալեր 80մմ հաստությամբ (η= 25-35կգ/մ ³ , λ<=0.04 Վտ/մ.0/С) EPS	մ ²	494.3	4,285.35	2,118,248.51
5	Ամրացում աերոզոլային պոլիուրեթանե սունձով 494,3մ ²	բալոն	98.9	8,094.83	800,578.69
6	Զերմամեկուսացման համար նախատեսված սոսինձե կապակցանյութով սվաղի իրականացում b=>3մմ	մ ²	574.8	1,904.32	1,094,603.14
7	Ապակե ցանցի (5x5մմ,քաշը 1մ ² - 160գ) տեղադրում սոսինձե կապակցանյութով սվաղի մեջ	մ ²	661	857.24	566,635.64
8	Պատերը ծեփամածկել լավորակ ճակատային մածիկով և ներկել գերկայուն ճակատային ներկով	մ ²	574.8	1,904.32	1,094,603.14
9	Ափսեանման խցաբութակ 10x160մմ, արժեքը	հատ	4023	42.56	171,218.88
10	Արտաքին փայտամածի կառուցում և քանդում	100մ ²	2.16	95,235.38	205,708.42
Հովար-5հատ					
1	Հովարների մետաղական տարրերի տեղադրում ուղղանկյուն խողովակներից 50x25x3 Շերտապողպատ -30x3	տ	0.243	904,736.53	219,850.98
2	Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ	մ ²	18.75	1,143.27	21,436.31
3	Պոլիկարբոնատ h=10մմ	մ ²	11.25	11,428.45	128,570.06
Ընդամենը 1-1 մաս տոկոսներով				66.74%	127,831,470.32
1-2. Կոնստրուկտորական մաս					
Բետոնե հարթակ և թեքահարթակ					
1	Խճով տոփամած գրունտ	մ ³	5.42	952.58	5,162.98
2	Բետոնե հիմքերի կառուցում B15 դասի բետոնով	մ ³	8.7	52,379.33	455,700.17
3	Բետոնե պատերի կառուցում B15 դասի բետոնով	մ ³	3.29	57,141.40	187,995.21
4	Բետոնե սալի, աստիճանների, թեքահարթակների կառուցում B15 դասի բետոնով	մ ³	2.1	47,618.12	99,998.05
Ե/բ պատ Պ-1 - 2 հատ					
1	Անցքերի շաղափում Φ12մմ L=200մմ	100 հատ	1.4	28,570.70	39,998.98
2	Պոլիմերցեմենտային շաղափի լցնում ամրանաձողերը տեղադրելիս	մ ³	0.3	190,470.76	57,141.23
3	Միածույլ ե/բետոնե պատի կառուցում B20 դասի բետոնով	մ ³	11.6	90,473.31	1,049,490.40
4	Φ8A240C դասի ամրանի արժեքը	տ	0.02	619,030.39	12,380.61
5	Φ10A500c դասի ամրանի արժեքը	տ	1.19	542,841.58	645,981.48
Շրջանակներ ՇՁ-1					
1	Նախապատրաստական շերտի կառուցում B10 դասի բետոնով	մ ³	0.36	42,856.05	15,428.18

2	Բետոնե հիմքերի կառուցում B15 դասի բետոնով	մ ³	3.6	52,379.33	188,565.59
3	Միաձույլ ե/բետոնե շրջանակի կանգնակի կառուցում B20 դասի բետոնով	մ ³	0.84	90,473.31	75,997.58
4	Միաձույլ ե/բետոնե շրջանակի հեծանների կառուցում B20 դասի բետոնով	մ ³	0.76	85,712.10	65,141.20
5	Միաձույլ ե/բետոնե սալի կառուցում B20 դասի բետոնով	մ ³	0.73	80,950.03	59,093.52
6	Միաձույլ ե/բետոնե պատի կառուցում B20 դասի բետոնով	մ ³	0.19	90,473.31	17,189.93
7	Փ8AC I դասի ամրանի արժեքը	տ	0.083	619,030.39	51,379.52
8	Փ10A500c դասի ամրանի արժեքը	տ	0.099	542,841.58	53,741.32
9	Փ18A500c, Փ20A500c դասի ամրանի արժեքը	տ	0.176	542,841.58	95,540.12
Միջնորմների (200մմ,100մմ) ամրացում՝ 1-ին մասնաշենք					
1	Անցքերի շաղափում Փ14մմ L=100մմ	100 հատ	3.5	28,570.70	99,997.45
2	Փ12A500c դասի ամրանի տեղադրում միջնորմների ամրակցման համար	տ	0.76	542,841.58	412,559.60
3	Մետաղական անկյունակ L63x4	տ	0.04	714,265.77	28,570.63
4	Մետաղական ցանցի Ց-1 (Փ6A1) տեղադրում միջնորմների ամրակցման համար	տ	0.4	666,647.65	266,659.06
5	Դյուբել Փ6	կգ	2.28	1,904.32	4,341.85
6	Խարամաբլոկների ամրանավորված անցքերի մեջ 50 դասի ցեմ.ավազային շաղափի լցում	մ ³	23.4	44,760.36	1,047,392.42
7	Փրփրապլաստ	մ ³	1.1	28,570.70	31,427.77
8	Միաձույլ ե/բետոնե բարավորների կառուցում B15 մակնիշի բետոնով	մ ³	0.704	76,187.96	53,636.32
9	Ամրան Փ12A500 c դասի	կգ	96.9	543.12	52,628.33
10	Ամրան Փ6A cl դասի	կգ	13.06	618.88	8,082.57
Միջնորմների (200մմ,100մմ) ամրացում՝ 2-րդ մասնաշենք					
1	Անցքերի շաղափում Փ14մմ L=100մմ	100 հատ	3.13	28,570.70	89,426.29
